Բողոքարկման Ընթացքը

Սոցիալական Ապահովությունը ուզում է վստահ լինել, թե ձեր Սոցիալական Ապահովության կամ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) յուրաքանչյուր դիմումի որոշումը ճիշտ լինի: Մենք ուշադիր ուսումնասիրում ենք ձեր տեղեկությունները նախքան ձեր իրավասությունն ու նպաստի գումարը որոշելը:

Երբ որոշում կայացնենք ձեր դիմումի վերաբերյալ, նամակով տեղեկացնում ենք ձեզ մեր որոշումը եւ բացատրում ենք մեր պատճառները: Եթե չհամաձայնվեք մեզ հետ, դուք կարող եք բողոքարկել՝ այսինքն, խնդրել մեզնից որ վերաքննենք ձեր դիմումը:

Ստանալով ձեր բողոքը, մենք քննարկում ենք որոշումը ամբողջությամբ, նույնիսկ այն մասերը, որոնք ձեր օգտին էին: Եթե մեր որոշումը սխալ էր, մենք կը փոխենք այն:

Ե՞րբ եւ ինչպե՞ս կարող եմ բողոքարկել

Եթե ցանկանում եք բողոքարկել, մեր նամակը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում դուք պետք է գրավոր կերպով ներկայացնեք ձեր բողոքը: Մենք ենթադրում ենք, որ դուք նամակը ստանում եք ծրարի վրա եղած ամսաթվից հետո հինգ օրվա ընթացքում՝ բացի եթե դուք ապացուցեք մեզ թե ստացել եք այն ավելի ուշ: Եթե օգնության կարիք ունեք բողոքի ներկայացման հետ, զանգահարե՛ք Սոցիալական Ապահովության ձեր տեղական գրասենյակին:

Ո՞րոնք են բողոքարկման մակարդակները

Սովորաբար գոյություն ունեն բողոքարկման չորս մակարդակներ: Դրանք են.

- Վերաքննում.
- Լսում Վարչական Դատավորի կողմից.
- Վերանայում Վերաքննման Դատական Խորհուրդի կողմից. ինչպես նաեւ
- Դաշնակցային դատարանի վերանայում:

Բողոքարկելու միջոցները բացատրվում են մեր որոշման նամակների մեջ:

Վերաքննում

Ձեր պարագան ամբողջությամբ վերաքննվում է մի անկախ քննիչի կողմից, որը առաջին որոշման չեր մասնակցել: Մենք կուսումնասիրենք առաջին որոշման ընթացքում ներկայացված լրիվ տեղեկությունները, ինչպես նաեւ բոլոր նոր ներկայացված ապացույցերը:

Վերաքննության ընթացքում ձեր ներկայությունը կարեւոր չե, որովհետեւ մեծմասամբ վերաքնումը ձեր փաստաթղթերի վերանայումն է: Սակայն, երբ դուք բողոքարկում եք ձեր հաշմանդամության նպաստների դադրումը ձեր առողջության բարելավման պատճառով, դուք կարող եք հանդիպել Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ եւ բացատրել, թե ինչու կարծում եք որ տակաւին հաշմանդամ եք:

Լսում

Եթե դուք համաձայն չեք վերաքննման որոշման հետ, դուք կարող եք խնդրել տեսակցություն Վարչական Դատավորի հետ, որը չեր մասնակցել առաջին որոշման կամ ձեր վերաքննման հարցով:

Լսման վայրը սովորաբար ձեր տնից 75 մղոն հեռավորության սահմաններու մեջ լինում է: Վարչական Դատավորը ձեզ կը տեղեկացնի լսման ժամանակի եւ վայրի մասին:

Դուք եւ ձեր ներկայացուցիչը (եթե ունեք մեկին), կարող եք ներկայանալ լսման եւ անձամբ բացատրել ձեր պարագան: Դուք կարող եք ուսումնասիրել ձեր թղթածրարի մեջ գտնված փաստաթղթերը եւ ներկայացնել նոր տեղեկություն:

Վարչական Դատավորը կը հարցափորձէ ձեզ եւ ձեր կողմից ներկա գտնվող վկաներին: Այլ վկաներ, օրինակ բժշկական կամ արհեստական մասնագետներ, նույնպես կարող են տեղեկություն տրամադրել լսման ընթացքում: Դուք կամ ձեր ներկայացուցիչը կարող եք հարցուփորձել վկաներին:

Սովորաբար, ձեր օգտին է անձամբ ներկա գտնվիլը լսման: Եթե դուք չեք ցանկանում ներկայանալ, պետք է գրավոր ձեւով մեզ տեղեկացնեք ձեր փափաքը:

Որոշ դեպքերում կարող ենք ձեր լսումը կատարել հեռատեսային խորհրդակցության միջոցով (video conference), անձամբ ներկայանալու փոխարեն: Նման դեպքում մենք վաղօրոք տեղեկացնում ենք ձեզ: Հեռատեսային խորհրդակցությամբ կարող ենք լսումները դիւրացնել ձեզ համար: Սովորաբար, հեռատեսային խորհրդակցության միջոցով կարող ենք ավելի արագ ցուցակագրել ձեր լսումը: Կարող է նաեւ լսման վայրը ավելի մոտ լինի ձեր տանը: Այս դեպքում հեշտ է լինում ձեր վկաների կամ այլ մարդկանց որ ձեզ ընկերակցին:

Եթե Վարչական Դատավորը որոշե որ ձեր ներկայությունը անհրաժեշտ չե, ան կայացնում է որոշում ձեր թղթածրարի մեջ գտնված փաստաթղթերի եւ նոր ներկայացված տեղեկությունների հիման վրա:

Լսումից հետո մենք ուղարկում ենք ձեզ նամակ եւ Վարչական Դատավորի որոշման օրինակը:

Վերաքննման Դատական Խորհուրդ

Եթե դուք համաձայն չեք լսման որոշման հետ, կարող եք դիմել Սոցիալական Ապահովության Վերաքննման Դատական Խորհրդին: Մենք ուրախությամբ կօգնենք ձեզ այս վերանայման խնդրանքը ներկայացնելու:

Վերաքննման Դատական Խորհուրդը ուսումնասիրում է վերանայման բոլոր խնդրանքները: Սակայն այն

(շրջել)

կարող է մերժել ձեր խնդրանքը, եթե կարծում է որ լսման որոշումը ճիշտ էր: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը որոշում է վերանայել ձեր գործը, այն կայացնում է որոշում ձեր գործի վերաբերյալ կամ էլ վերադարձնում է ձեր գործը Վարչական Դատավորին՝ կրկին վերաքննման համար:

Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը մերժում է վերանայելու ձեր խնդրանքը, մենք ձեզ կուղարկենք մերժման նամակ որտեղ բացատրում ենք ձեզ մերժման պատճառները: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը վերանայում է ձեր գործը եւ ինքնուրույն կայացնում է որոշում, մենք կուղարկենք որոշման օրինակը: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը վերադարձնի ձեր գործը Վարչական Դատավորին, մենք դարձյալ ձեզ կուղարկենք նամակ եւ հանձնարարականի օրինակը:

Դաշնակցային Դատարան

Եթե դուք համաձայն չեք Վերաքննման Դատական Խորհրդի որոշման հետ եւ կամ Վերաքննման Դատական Խորհուրդը որոշում է չքննել ձեր դիմումը, դուք կարող եք քաղաքացիական հարցով դաշնակցային դատարան դիմել: Վերաքննման Դատական Խորհրդի որոշման նամակում բացատրում ենք դատարան դիմելու ձեւերը:

Արդյո՞ք իմ նպաստները շարունակվելու են

Որոշ դեպքերում դուք կարող եք մեզնից խնդրել որ ձեր նպաստների վճարումը շարունակվի մինչեւ բողոքի որոշման կայացումը: Այս կարելի է, եթե.

- Դուք բողոքարկում եք մեր որոշումը դադրեցնելու ձեր հաշմանդամության նպաստները, որովհետեւ մենք չենք կարծում թե ձեր առողջական վիճակը համապատասխանում է հաշմանդամության մակարդակի.
- Դուք բողոքարկում եք մեր որոշումը իրավասու չլինելու, կրճատելու եւ կամ դադրեցնելու ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումները:

Եթե ուզում եք որ ձեր նպաստները շարունակվեն, դուք պետք է բողոքը ներկայացնեք մեր նամակը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Եթե ձեր բողոքը մերժվում է, դուք հաւանաբար ստիպված կը լինեք ետ վճարել այն գումարները, որոնք դուք իրավասու չէիք ստանալու:

Կարո՞ղ եմ օգնություն ստանալ որեւէ մեկից

Այո: Շատ մարդիկ իրենց Սոցիալական Ապահովության բողոքները ներկայացնում են Սոցիալական Ապահովության Գրասենյակի անվճար օգնությամբ: Սակայն, դուք կարող եք օգնություն ստանալ փաստաբանի, բարեկամի կամ որեւէ այլ անձի կողմից: Ձեզ օգնելու համար ձեր կողմից նշանակված անձը կոչվում է ձեր «ներկայացուցիչ»ը: Մենք ձեր ներկայացուցչի հետ կաշխատենք նույնպես, ինչպես ձեզ հետ:

Ձեր ներկայացուցիչը կարող է ձեր Սոցիալական Ապահովության դիմումի եւ բողոքի գործերը մեծամասնությամբ կատարել: Նա եւս կստանա մեր բոլոր որոշումների օրինակները:

Ձեր ներկայացուցիչը չի կարող ձեզնից դրամ վերցնել կամ գանձել՝ առանց Սոցիալական Ապահովության կողմից նախապես գրավոր վաւերացում ստանալը: Եթե ցանկանում եք հաւելյալ տեղեկություն ստանալ ներկայացուցիչ ունենալու մասին, կարդացեք՝ *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* (հրատարակություն՝ թիւ 05-10075 AM): Այս հրատարակությունը կարող եք գտնել մեր կայքէջում:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՝կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10041-AM
The Appeals Process
January 2006